ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 244/2-2 «23» 12 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում շահերի բախման բացահայտման և սահմանափակման կանոնակարգի» (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 30.06.2022 թ. թիվ 10/7.1 որոշմամբ) դրույթները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և գործընկերների միջև շահերի բախումը բացառելու (սահմանափակելու) վերաբերյալ համաձայնագրի օրինակելի ձևանմուշը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը սահմանված կարգով հրապարակել ԵՊՀ կայքէջում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված ԵՊՀ ռեկտորի 23.12.2025 թ. թիվ 244/2-լ հրամանի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ _____ ՄԻՋԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « _____ » _____ 202 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ԵՊՀ), մի կողմից, ի դեմս ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, և _____ը (այսուհետ՝ _____), մյուս կողմից, ի դեմս _____, ով գործում է _____ կանոնադրության հիման վրա, այսուհետ միասին՝ Կողմեր, նպատակ ունենալով բացառել (սահմանափակել) իրենց միջև ծագող (կամ արդեն իսկ ծագած) հարաբերություններում շահերի հնարավոր բախման հնարավորությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը հայտարարում են, որ իրենց միջև կնքված (կնքվելիք) քաղաքացիրավական բնույթի պայմանագրերի, համագործակցության հուշագրերի կամ այլ փաստաթղթերի հիման վրա ծագող (կամ արդեն իսկ ծագած) հարաբերություններում (այսուհետ՝ հարաբերություններ) չունեն շահերի բախում:
2. Կողմերը հաստատում են, որ իրենց միջև ծագող (կամ արդեն իսկ ծագած) հարաբերությունները, ինչպես նաև սույն համաձայնագրի կնքումը և կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին և չի վնասում համբավին:
3. Կողմերը վերահաստատում են որ սահմանափակված են իրենց միջև կնքված (կնքվելիք) քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրերում, համագործակցության հուշագրերում կամ այլ փաստաթղթերում սահմանված պարտավորություններով և դրանց շրջանակից դուրս միմյանց նկատմամբ չունեն (ապագայում միմյանց չեն առաջադրելու) որևէ այլ պարտավորության կատարման պահանջ, կամ բարոյական, ֆինանսական, գործընկերային կամ այլ բնույթի աջակցության ակնկալիք:
4. Սույն համաձայնագրի կնքման և կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահություն, ինչպես անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել սույն համաձայնագրի և իրենց միջև ծագող (կամ արդեն իսկ ծագած) հարաբերություններից բխող նպատակների ու խնդիրների իրականացումը:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 Հեռ. (+37460) 710000 էլ. փոստ՝ info@ysu.am Ռեկտոր՝ Հովհաննես Հովհաննիսյան _____ (ստորագրություն)/Կ.Տ.	_____ (ստորագրություն)/Կ.Տ.